



Սյունիքի մարզում կլիմայի փոփոխությանն աղապատացման և ռեսուրսների կայուն օգտագործման գաղափարների մրցույթ

Կանոնակարգ

«Համայնքապետարանի բնապահպանությունը և աղապատացումը կլիմայի փոփոխությանը Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակներում հայտարարվել է «Սյունիքի մարզում կլիմայի փոփոխությանն աղապատացման և ռեսուրսների կայուն օգտագործման գաղափարների մրցույթ»: Մրցույթին ներկայացված ծրագրերը պետք է նպաստեն բնական ռեսուրսների (հողային և ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) կայուն օգտագործմանը:

Մրցույթն անցկացվում է հետևյալ անվանակարգերում.

1. Գյուղական տուրիզմ (հյուրատների կառուցում կամ վերակառուցում, թեմատիկ տուրերի իրականացում)
2. Օրգանական գյուղատնտեսության աջակցություն (օրգանական սերտիֆիկացում, վայրի հավաք, մեղվապահություն)
3. Ջրային ռեսուրսների կայուն օգտագործում (կաթիլային ոռոգման, անձրևաջրերի օգտագործման համակարգերի ներդրում)
4. Տեղական արտադրանքի աջակցություն (ներառյալ ձեռագործ աշխատանքներ, հուշանվերներ, սնունդ)
5. Արոտավայրերի արդյունավետ կառավարում (ենթակառուցվածքների բարելավում)

Մրցույթին կարող են մասնակցել ծրագրում ընդգրկված հետևյալ բնակավայրերի ներկայացուցիչները.

Աղիտու	Հացավան	Սառնակունք
Ախլաթյան	Իշխանասար	Սպանդարյան
Աղվանի	Խոտ	Սվարանց
Աշոտավան	Լոր	Թասիկ
Բալակ	Լծեն	Տանձավեր
Բնունիս	Մուցք	Տաթև
Դաստակերտ	Նժդեհ	Տոլորս
Դարբաս	Նորավան	Տորունիք
Գետաթաղ	Շաղատ	Ծղուկ
Գորայք	Շամբ	Ույծ
Հալիձոր	Շենաթաղ	Վաղատին
Հարժիս	Սալվարդ	Որոտնավան

Դրամաշնորհի առավելագույն չափը կարող է լինել **2.000.000 դրամ**:



Հայտերի ընդունման վերջնաժամկետն է **2023թ. մայիսի 31-ը**:

Մասնակիցներին ներկայացվող պահանջներն են.

- Մասնակցել կարող են կոոպերատիվները, 18 տարին լրացած և ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձինք և անձանց խմբերը:
- Դրամաշնորհային ծրագիրը պետք է իրականացվի բացառապես ծրագրում ընդգրկված բնակավայրերում:
- Մեկ մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ ծրագիր:
- Դրամաշնորհը ստանալու դեպքում, մասնակիցը պարտավորվում է ունենալ անձնական ներդրում դրամաշնորհից ստացված գումարի հարյուր տոկոսի չափով (ներկայացվող ծրագրի բյուջեյի 50 տոկոսը տրամադրվում է դրամաշնորհի կողմից, իսկ մասնակցի կողմից պետք է տրամադրվի մյուս 50 տոկոսը կամ ավել):
- Հաղթող մասնակիցները պարտավորվում են կնքել աշխատանքների իրականացման պայմանագիր:
- Մրցույթին չեն կարող մասնակցել գործող օրենսդրությամբ սահմանափակումներ ունեցողները (լուծարում, սննկացում և այլն):
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել համապատասխան դիմում-հայտը ամբողջությամբ և միայն հայատառ, կցել բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Գնահատման չափանիշներ

Դրամաշնորհային ծրագրերը գնահատվելու են ըստ հետևյալ չափանիշների՝

- Ծրագրի արդյունքներից օգտվող շահառուների քանակը,
- Համայնքի զարգացման վրա ծրագրի ազդեցությունը,
- Բնական ռեսուրսների կայուն օգտագործման վրա ծրագրի ազդեցությունը,
- Ծրագրի ազդեցություն շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանության վրա,
- Ծրագրի կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարը,
- Ծրագրի իրատեսականությունը,
- Ծրագրի հեղինակի փորձը տվյալ ոլորտում,
- Ծրագրի բյուջե,
- Ռիսկեր:

Եզրափակիչ դրույթներ



Bundesministerium für
wirtschaftliche Zusammenarbeit
und Entwicklung

**Համայնքահեն
բնապահպանությունը
եվ ադապտացումը կլիմայի
փոփոխությանը Սյունիքի մարզում**

Հաղթող մասնակիցներին ընտրելուց անմիջապես հետո, նրանց հետ կկնքվի աշխատանքների իրականացման պայմանագիր: Ամբողջ ծրագրի իրականացման ընթացքում տեղի են ունենալու ստուգիչ այցեր: Մասնակիցները պարտավոր են լինելու ամբողջ ծրագրի ընթացքում ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ: Ժյուրին կարող է փոփոխություններ իրականացնել բյուջեում՝ փոխել ստացվելիք դրամաշնորհի չափը, կախված ներկայացված ծրագրից:

Մրցույթի բոլոր հաղթողները կստանան անհրաժեշտ խորհուրդներ տրամադրված միջոցների հետ աշխատելու կանոնների և ընթացակարգերի, ինչպես նաև նախագծի հաշվետվությունների պատրաստման վերաբերյալ:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (+374) 44 070857 հեռախոսահամարով, կամ կապ հաստատել մեզ հետ bestidea@nabu.am էլ.հասցեով: